600.0077.13.04.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 ապրիլի 2016 թվականի №77Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի №85Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի մարտի 30-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 9-ի «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №85Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0537 լիցենզիայով (այսուհետ՝ №0537 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ Որոշման մեջ «մինչև 2016 թվականի ապրիլի 20-ը» բառերը փոխարինելով «մինչև 2017 թվականի ապրիլի 20-ը» բառերով:

2. №0537 լիցենզիայի պայմանների 30-րդ և 32-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:».

«32. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և շուկայի կանոններով սահմանված կարգով էլեկտրական էներգիայի (հզորության) վաճառքի մտադրության դեպքում՝ սակագնի սահմանման հայտ:»:

3. «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ №0537 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ջերմուկ-1» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի մայիսի 23-ի №1265/10/2 գրությամբ №14-0013 երաշխիքի համաձայն երաշխավորված չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար դրամ գումարից երկու միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել չորս միլիոն յոթ հարյուր վաթսունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2017 թվականի հունիսի 4-ը գործողության ժամկետով:

4. «Ջերմուկ Տուրբոշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի ապրիլի 20-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
13 ապրիլի 2016թ.